ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 02/12-27323-ա «29» 05 2015 թ.

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԻ ԻՐԱՎԱԲԱՆ ԳԵՎՈՐԳ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հայրապետյան

Ի պատասխան Ձեր 22.05.2015թ. հ.249-ի1 գրության՝ 2012-2015թ.թ-ին Երևանի քաղաքապետարանի սոցիալ-զարգացման ծրագրում ընդգրկված Երևանի «Հակոբ Կոջոյան» կրթահամալիրի հիմնանորոգման վերաբերյալ, տեղեկացնում ենք, որ կրթահամալիրի շենքը կառուցվել է 1937թ.: 2009 թվականին հիմնանորոգվել է դպրոցի տանիքը: 2010 թվականին փոխվել են դպրոցի մուտքի ճակատային 2 ցուցափեղկային մեծ. պատուհանները: 2011 թվականից սկսած 3 տարվա ընթացքում քաղաքապետարանի կողմից փոխվել է տարրական դպրոցի(1-4 դասարաններ) դպրոցական գույքը: Երևանի քաղաքապետարանի 2012թ. ծրագրով մայրաքաղաքի դպրոցների ջեռուցման համակարգերի կառուցման աշխատանքների շրջանակներում իրականացվել է «Հակոբ Կոջոյան» կրթահամալիրի ջեռուցումը սնուցող կաթսայատան վերակառուցման, նոր կաթսայի տեղադրման և դպրոցի նոր ջեռուցման համակարգի կառուցման՝ 32,7 մլն դրամի շին. աշխատանքներ:

«Հակոբ Կոջոյան» կրթահամալիրի հիմնանորոգման խնդիրը ներկա պահին քննարկման փուլում է:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Կատ.՝ Գ.Սողոմոնյան
Հեռ.՝ 514-247